

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒՆԵՐՆԵՐ

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'առանագրեմք 1955 տարւոյ ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերու տնօրէնութեան հետեւեալ բարեպաշտական նուէրները:

1. — Ազէնիւրցի Այրի Տիկին Կիւլիանէ Ալեքսանեանը վեց հատ Սարկաւազի շապիկ կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին:

2. — Փարիզէն (Արֆորվիլ) Տիկին Ալիո Ճօնկուլտայեան Ս. Գլխադրին կը նուիրէ պարզ փուլերով բանուած ճերմակ արլասի վրայ սկիւնի ծածկոց մը, և Ժառանգաւոր աշակերտներուն 30 հատ ներքնաշապիկ և 30 վերնաշապիկի կտոր:

3. — Պէյրութէն Ատանացի Տիկ. Զապէլ Մելքոնեանը Ս. Գլխադրին կը նուիրէ մէկ ճերմակ ինքնաձեռագործ ծածկոց մը, ձեռամբ Տիկ. Եղիսարեթ Մաքրինիստեանի:

4. — Հալէպէն Այնթապցի Օր. Էֆրօնիա Աթոնեանը Ս. Յակոբեանց Տաճարին կը նուիրէ մէկ կապոյտ յատուկով և վրան ճերմակ Միլանի ինքնաձեռագործ սկիւնի ծածկոց մը:

5. — Հալէպէն Կիւրինցի Օր. Մարի Վարդապետեանը մէկ ասեղնագործ մատի ծածկոց կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին:

6. — Երուսաղէմացի Տիկ. Վիքթորիա Պէտէվեան և որդին Գէորգ, մէկ ճերմակ

մետաքսեայ Աւետարանի բռնիչ կը նուիրեն Ս. Յակոբայ Տաճարին:

7. — Հալէպէն Այնթապցի Այրի Տիկին Սանդուխտ Գրքաւորեանը Ս. Յակոբայ Տաճարին կը նուիրէ ճերմակ-դեղին փուլերով կտոր սկիւնի ծածկոց մը:

8. — Հալէպէն Այնթապցի Տիկին Ուսանա Տէրվիշեանը Ս. Յակոբայ Տաճարին կը նուիրէ ճերմակ գրակալի ծածկոց մը:

9. — Տէտէաղաճէն Կարապետ Ժամակոչեանը արծաթէ լեզու մը կը նուիրէ Ս. Յակոբին, իր անխօս Վերոնիքա աղջկան համար, ձեռամբ Ռամելլա Խաչիկեանի:

10. — Հալէպէն Զէյթունցի Տիկ. Նուարդ Փաթանեան մէկ ցալլոն կապոյտ շղարշ կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին:

11. — Հալէպէն Զէյթունցի Տիկին Լուսարեք Պալճեան մէկ ցալլոն կապոյտ շղարշ կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին:

12. — Պրուսացի Մուսուլարեան Տիկին Մարի Շաշմեան ոսկի և մարգրիտ M (Ն հատ) տառերով ապարանջան մը կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին Ս. Աստուածածնայ պատկերին:

13. — Պաղտատէն Վանեցի Յարութիւն Աթանասեան և Սիրվարդ Պաղտատեան զոյգ մը քորփուրայ կը նուիրեն Ս. Յակոբայ Տաճարին և Ս. Հրեշտակապետաց Եկեղեցիին:

14. — Երուսաղէմէն, Տիկին Նազելի Ներսէսեանը մանրակապոյն ոսկի ծաղիկներով բանուած երկար քիւլ մը կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին:

15. — Պիթլիցի Այրի Տիկին Արաքսի Ալվանտեան երկու հատ Աւետարանի բռնիչ կը նուիրէ, մին Ս. Յակոբայ Տաճարին՝ իսկ միւսը Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ:

16. — Սպարթացի Տիկին Սիրանոյշ Սիմայեան մէկ ոսկի մատանի փոքր ամբիս քարով, կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին Ս. Աստուածածնայ պատկերին:

17. — Երուսաղէմէն Այնթապցի Տիկին Էլիզա Մէնէշեանը մէկ ճերմակ սեղանի ծածկոց կը նուիրէ Ս. Աստուածածնայ Տաճարի Աւագ Սեղանին:

18. — Երուսաղէմէն Օր. Հնազանդ Տէր Կարապետեանը Ս. Յակոբայ Տաճարին կը նուիրէ զոյգ մը հնդկական գործ պղնձէ զարդարուն ծաղկամաններ:

19. — Երուսաղէմացի Յակոբ Գրիգոր Մնացականեանը մէկ արծաթաման մեծ կանթեղ մը կը նուիրէ Ս. Յակոբին, իր աշխատութեան անդրանիկ վաստակին:

Լուսարարապէս

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Կեդր. Վարչ. Ժողովը պատրաստել տալով պիտի ուղարկէ իր չըջանակներուն:

12. Նիւ Եօքքի մէջ Զորեկեանի տօնակատարութիւնը պիտի տարբարի Ամերիկայի Կեդրոնական Յանձնաժողովին նախաձեռնութեամբ:

Ան տեղի պիտի ունենայ 1956 Յունիս 17-ին Միութեան Ամերիկայի Պատգամաւորական Ժողովին յաջորդ օրը. Կիրակի, Ուաշինգթոն Թաւրա պանդոկին մէջ:

Երազարուած է ժամը 1-էն՝ 4:30 ժողովրդային հանդէս մը ունենայ՝ ազատ մուտքով, իսկ երեկոյին՝ ճաշկերոյթ:

Թէև Ամերիկայի բոլոր Մասնաճիւղերը Յօբելեանի իրենց առանձին տօնախմբութիւնները պիտի ունենան, բայց հրահանգ պիտի տրուի որ անոնք պատգամաւորները զրկեն Նիւ Եօքքի հանգիստութեանց:

13. Նախագահ Տիար Ա. Մանուկեան պիտի աշխատի ներկայ գտնուիլ Ամերիկայի գլխաւոր քաղաքներուն մէջ սարքուելիք հանդէսներուն՝ մինչև աշուն, իսկ Սեպտեմբերին արտասահման շուրջ երեք ամիս տեւող ճամբորդութիւն մը պիտի կատարէ և այդ չըջանիլի գանապան մայրերուն մէջ կատարուող տօնախմբութեանց եւս ներկայ պիտի ըլլայ: